ԻՆՖՈՐ ՄԱՑԻԱՅԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ ՀԿ
ՀՀ, ք. Երևան, Բուզանդի 1/3, 4-րդ հարկ
Հեռ. 091407836, Էլ. հասցե foi@foi.am, www.foi.am
FREEDOM OF INFORMATION CENTER NGO
1/3 Buzand street, 4th floor, Yerevan, RA

17.12.2018
340-79

Երևանի քաղաքապետ
Հայկ Մարությանին

Տեղեկատվություն ստանալու հարցում

«Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 3-րդ մասի 11-րդ կետի համաձայն՝ տեղեկատվություն տնօրինողը տարին առնվազն մեկ անգամ պարտավոր է հրապարակել ստացված հարցումների վերաբերյալ վիճակագրական և ամփոփ տվյալները, այդ թվում՝ մերժման հիմքերը:

Հաշվի առնելով վերոգրյալը, ինչպես նաեւ ղեկավարվելով ՀՀ Սահմանադրության 42-րդ եւ 51-րդ հոդվածներով եւ «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածով՝ խնդրում ենք տրամադրել հետևյալ տեղեկությունները.

1. 2016 եւ 2017 թվականների ընթացքում Երևանի քաղաքապետարանի կողմից ստացված տեղեկություն ստանալու հարցումների տարեկան վիճակագրությունների հրապարակման աղբյուրները (էլեկտրոնային հղումները):
2. 2018 թվականի 1-3 եռամսյակների ընթացքում Երևանի քաղաքապետարանի կողմից ստացված տեղեկություն ստանալու հարցումների վիճակագրության հրապարակման աղբյուրը (էլեկտրոնային հղումները):
3. 2016, 2017 թվականների և 2018 թվականի 1-3 եռամսյակների ընթացքում Երևանի քաղաքապետարանի տեղեկություն ստանալու հարցմամբ դիմողներից քանի՞սն են եղել քաղաքացի, քանի՞սը՝ ՀԿ և քանի՞սը՝ լրագրող: Խնդրում ենք տվյալները տրամադրել առանձնացված՝ ըստ նշված ժամանակահատվածների:

Խնդրում ենք տեղեկություն ստանալու հարցմանը պատասխանել «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածով սահմանված կարգով եւ ժամկետներում:

Հարգանքով՝

ԻԱԿ նախագահ Շուշան Դոյդոյան